Հետագա գործողությունների վերաբերյալ Հայաստանի II զեկույց Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ (2015թ. հունիս)

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

2012թ. հուլիս՝ (Եզրափակիչ դիտարկումների ընդունում CCPR/C/ARM/CO/2)

2013թ. օգոստոս՝ Հետագա գործողությունների վերաբերյալ պետության զեկույցի ներկայացում

Ընթացիկ կարգավիճակ՝ Հետագա գործողությունների վերաբերյալ պետության պատասխաններ՝ ուշացած 2015թ. հունվարի 15-ից

ՆԿԱՐԱԳԻՐ

Հանձնարարական 12	Գնահատման սանդղակ	Նկարագիր
Մասնակից պետությունը պետք է սահմանի արդյունավետ քննչական ընթացակարգեր՝ ապահովելու, որ 2008թ. մարտիմեկյան իրադարձությունների ժամանակ անհամաչափ ուժ կիրառած իրավապահները, այդ թվում՝ հրամանատարության լիազորություններով իրավապահները, ենթարկվեն պատասխանատվության և համապատասխան պատժամիջոցների:	C	Էական առաջընթաց չի արձանագրվել: (մանրամասների համար տե՛ս ստորև բաժինները)
Մասնակից պետությունը պետք է նաև երաշխավորի, որ վերոնշյալ գործողություններից տուժած անձինք ստանան պատշաճ փոխհատուցում և անցնեն համապատասխան բժշկական և հոգեբանական վերականգնման կուրս:	C	Էական առաջընթաց չի արձանագրվել: (մանրամասների համար տե՛ս ստորև բաժինները)
Հանձնարարական 14	Գնահատման սանդղակ	Նկարագիր
Մասնակից պետությունը պետք է ստեղծի բոլոր ազատազրկման վայրերում խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի վերաբերյալ բողոքների ստացման և դրանց ընթացք տալու անկախ	C	Էական առաջընթաց չի արձանագրվել: (մանրամասների համար տե՛ս ստորև բաժինները)

համակարգ:		
Մասնակից պետությունը պետք է ապահովի, որպեսզի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ցանկացած դեպքերով իրականացվի դատական կարգով հետապնդում և նշանակվի համաչափ պատիժ:	C	Խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի վերջին դեպքերով դատական կարգով հետապնդում չի իրականացվել (մանրամասների համար տե՛ս ստորև բաժինները):
Հանձնարարական 21	Գնահատման սանդղակ	Նկարագիր
Մասնակից պետությունը պետք է լրամշակի իր ներպետական իրավական դրույթները, որպեսզի ապահովի գործադիր և օրենսդիր ճյուղերից դատական համակարգի անկախությունը և դիտարկի ի լրումն Դատավորների կոլեգիալ կորպուսի՝ դատավորների նշանակման և առաջխաղացման և կարգապահական կանոնակարգերի կիրառման համար պատասխանատու անկախ մարմին ստեղծելու հնարավորությունը:	C	Էական առաջընթաց չի արձանագրվել: (մանրամասների համար տե՛ս ստորև բաժինները)

Նախապատմություն և հիմնավորում

Մարդու իրավունքների կոմիտեին (ՄԻ կոմիտե) ներկայացված Հայաստանի երկրորդ և երրորդ համակցված պարբերական զեկույցը[1] ՔՔԻՄԴ-ի իրագործման վերաբերյալ դիտարկվել է 2012 թվականի օգոստոսին: Եզրափակիչ դիտարկումների[2] 28-րդ կետում Մարդու իրավունքների կոմիտեին խնդրել է Հայաստանին մեկ տարվա ընթացքում տեղեկություններ տրամադրել առաջնահերթ ուշադրություն պահանջող 3 հանձնարարականների (N° 13, 14 և 15) կատարման վերաբերյալ:

Նշված 3 առաջնահերթ հանձնարարականները հիմնականում վերաբերում են հետևյալին.

- 2008թ. մարտիմեկյան իրադարձությունների անպատժելիություն (կետ 12)
- խոշտանգումներ և դաժան վերաբերմունք (կետ 14)
- դատական համակարգի անկախություն (կետ 21)

2013թ. օգոստոսին մասնակից պետությունը ներկայացրել է Հետագա գործողությունների մասին զեկույցը,[3] իսկ 2014թ. հունվարին ներքոստորագրյալ կազմակերպությունները ներկայացրել են այլընտրանքային զեկույցը:[4] 2014թ. մարտին կայացած 110-րդ նիստի ընթացքում ՄԻ կոմիտեն ընդունել է վերոնշյալ առաջնահերթ հանձնարարականների կատարման հետևյալ գնահատման սանդղակները.

- Կետ12՝ C1 (Պատասխանել ստացվել է, սակայն ձեռնարկված գործողությունները չեն նպաստել հանձնարարականի կատարմանը):
- Կետ 14՝ C1
- Կետ. 21՝ C1

[1] http://tbinternet.ohchr.org/ layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CCPR%2fC%2fARM%2f2-3&Lang=en
[2] http://tbinternet.ohchr.org/ layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CCPR%2fC%2fARM%2fCO%2f2&Lang=en
[3] http://tbinternet.ohchr.org/Treaties/CCPR/Shared%20Documents/ARM/INT CCPR FCO ARM 15760 E.pdf
[4] http://tbinternet.ohchr.org/Treaties/CCPR/Shared%20Documents/ARM/INT CCPR NGS ARM 16205 E.pdf

Այդ կապակցությամբ Կոմիտեն վերահաստատել է իր հանձնարարականը և մասնակից պետությանը խնդրել է տրամադրել լրացուցիչ տեղեկություններ: Հայաստանի կառավարությանն[5] (2014թ. դեկտեմբեր) ուղղված իր վերջին հաղորդագրության մեջ ՄԻ կոմիտեն խնդրել է թարմացված տեղեկատվություններ տրամադրել առաջնահերթ հանձնարարականների կատարման վերաբերյալ մինչ 2015թ. հունվարի 15-ը: ՄԻ կոմիտեին այդ զեկույցի ներկայացումից հետո 2015թ. փետրվարին Հայաստան են այցելել ՔՔԻՄԴ հարցերով կենտրոնի (CCPR Centre) և «Մարդու իրավունքների տուն» հիմնադրամի[6] ներկայացուցիչները: Այցի շրջանակներում վերջիններս հնարավորություն են ունեցել հանդիպելու ՄԻ կոմիտեի հանձնարարականների կատարմանն ուղղված գործողություններին հետևելու գործընթացում ներգրավված պետական հաստատությունների ներկայացուցիչներին: Նրանք տեղեկացան, որ ընթացքի մեջ էր Հետագա գործողությունների վերաբերյալ նոր զեկույցի կազմումը: Այդուհանդերձ, փաստաթուղթը կազմելու ժամանակ այդ զեկույցը, հավանաբար, դեռևս չէր ներկայացվել:

Այն փաստը, որ սույն զեկույցի ուշադրության կենտրոնում են 3 առաջնային հանձնարարականները որևէ կերպ չի նսեմացնում կոմիտեի կողմից Հայաստանին ներկայացված վերոհիշյալ Եզրափակիչ դիտարկումներում տեղ գտած մնացած հանձնարարականների կարևորությունը:

Ստորև բերված աղյուսակներում ներկայացված են հանձնարարականների կատարման գծով կոմիտեի ընդունված գնահատման սանդղակները, առաջարկություններ, գնահատման սանդղակի հիմնավորումը, անհրաժեշտ հետագա գործողությունները և այլ դիտողություններ: Սույն զեկույցում առաջարկվող գնահատման սանդղակի հիմքում ընկած է Կոմիտեի՝ հանձնարարականների կատարման նկատմամբ հսկողության ընթացակարգը:[7]

Հարցերի և դիտողությունների համար դիմեք Արթուր Սաքունցին՝ asakunts@hcav.am

[5] http://tbinternet.ohchr.org/Treaties/CCPR/Shared%20Documents/ARM/INT CCPR FUL ARM 19314 E.pdf
[6] https://www.facebook.com/media/set/?set=a.10153112535748839.1073741890.298121883838&type=1
[7] http://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=6QkG1d%2fPPRiCAqhKb7yhspbttFNxTkgvXTPJWlZn3vkYvOw9PSedwR29kWvzz85iBTqSkX%2fNIaqz%2fTnQIap1opOvss4QoXGZP%2fAsIgygKqqAQ2sRgNSOpDzqmuSHNoc%2b

Կետ 12

Կոմիտեն մտահոգված է 2008 մարտիմեկյան իրադարձությունների ժամանակ ոստիկանների կողմից անհամաչափ ուժի կիրառման համար շարունակվող անպատժելիության շուրջ՝ մահվան ելքով դեպքերը քննելու համար գործադրված ջանքերից անկախ (հոդվ.. 6, 7և 14.

Կոմիտեի հանձնարարականը	Գնահատման սանդղակ	Պետության կողմից ձեռնարկված գործողություններ	ՀԿ-ների այլ մեկնաբանություններ
Մասնակից պետությունը պետք է սահմանի արդյունավետ քննչական ընթացակարգեր՝ ապահովելու, որ 2008թ. մարտիմեկյան իրադարձությունների ժամանակ անհամաչափ ուժ կիրառած իրավապահները, այդ թվում՝ հրամանատարության լիազորություններով իրավապահները, ենթարկվեն պատասխանատվության և համապատասխան պատժամիջոցների:	C	Որևէ առաջընթաց չի արձանագրվել	2011թ. դեկտեմբերին Կառավարությանն առընթեր Հատուկ քննչական ծառայությունն ի գիտություն լրատվամիջոցների հաղորդագրություն է հրապարակել 2008թ. մարտիմեկյան իրադարձությունների վերաբերյալ:[8] Չնայած նշված իրադարձություններին տեղական լրատվամիջոցների կողմից կատարվող շարունակական անդրադարձին՝ կառավարությունը հետևողական հետաքննություն չի նախաձեռնել: ՀՀ հատուկ քննչական ծառայությունը պնդում է, որ քննությունն ընթացքում է, սակայն այլ տեղեկություններ չեն հրապարակվում: 2015թ. ապրիլին ՀՀ Օմբուդսմենը հրապարակել է իր տարեկան զեկույցը, որտեղ նա նույնպես դատապարտել է այն, որ հետաքննություն չի իրականացվում, և տուժածներին որևէ փոխհատուցում չի տրամադրվել:[9] 2014թ. սեպտեմբերի 13-ին ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանը հեռուստատեսային հարցազրույցում[10] նշել է, որ «տեղյակ չէ քննության ընթացքից» և «չի զբաղվել այս գործով»:[11] Նա նաև հաստատել է, որ այդ իրադարձությունների ժամանակ ռազմական ոստիկանության կողմից ձեռնարկված բոլոր գործողություններն ուղղված էին կառավարության շենքի պահպանությանը: Հարկ է նշել, որ 2008թ. մարտի դրությամբ Վլադիմիր Գասպարյանը զբաղեցրել է զինվորական ոստիկանության պետի պաշտոնը: Ռազմական ոստիկանությունը Պաշտպանության նախարարության ստորաբաժանումներից է և ենթարկվում է նշված նախարարությանը: Ռազմական ոստիկանության գործողությունները հետաքննելու հարցում քննչական մարմինների անգործությունը նպաստում է մարտիմեկյան իրադարձությունների համար անպատժելիության մթնոլորտի

[8] http://www.investigatory.am/upload/file/Information for MassMedia.pdf

[9] http://ombuds.am/en

[10] https://www.youtube.com/watch?v=r4kUhMhm4mE

[11] http://news.am/eng/news/228797.html

			խորացմանը: 2014թ. հոկտեմբերի 1-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը[12] գրավոր հարցում (Ե/2014-01.10/391) է արել ՀՀ Գլխավոր դատախազին և Հատուկ քննչական ծառայությանը (ՀՔԾ) Վլադիմիր Գասպարյանի տարածած տեղեկությունների վերաբերյալ հիմնվելով Քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի վրա, որի համաձայն՝ լրատվամիջոցներով տարածվող տեղեկությունները կարող են հիմք ծառայել դատական գործողությունների համար: ՀՔԾ-ն հարցմանը պատասխանել է (18-3255 /դ-14), 2014թ. նոյեմբերի 5-ին՝ նշելով, որ խնդրո առարկա հայտարարությունը քրեական բնույթի որևէ տարր չի պարունակել և Ծառայությունը չէր կարող որևէ գործողություն ձեռնարկել կամ որոշում կայացնել դատական կարգով հետապնդում իրականացնելու վերաբերյալ: Արդյունքում՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հայտարարել է, որ գլխավոր դատախազը եւ ՀՔԾ-ն[13] շահագրգռված չեն անցկացնել մարտիմեկյան իրադարձությունների պատշաճ հետաքննություն:
Մասնակից պետությունը պետք է նաև երաշխավորի վերոնշյալ գործողություններից տուժած անձինք ստանան պատշաճ փոխհատուցում և անցնեն համապատասխան բժշկական և հոգեբանական վերականգնման կուրս:	C		Ինչպես նշվել է 2014թ. հունվարի մեր զեկույցում,[14] մարտիմեկյան իրադարձությունների զոհերի ընտանիքներին պետությունը որևէ փոխհատուցում կամ աջակցություն չի տրամադրել: 2014 թվականին պատգամավոր Գագիկ Ջհանգիրյանը ներկայացրել է «2008թ. մարտիմեկյան իրադարձությունների զոհերի հարազատներին փոխհատուցում տրամադրելու մասին» օրինագիծը, որը, սակայն, այդպես էլ չի ընդունվել: Փաստորեն, մարտիմեկյան իրադարձությունների զոհերի հարազատներին որևէ փոխհատուցում կամ հոգեբանական կամ բժշկական օգնություն չի տրամադրվել: Նրանցից ոմանք, օրինակ՝ Ալլա Հովհաննիսյանը, հեռացել են Հայաստանից և այժմ բնակվում են արտասահմանում: Բողոքի ակցիաներին մասնակցելու համար տիկին Հովհաննիսյանը նաև ազատվել է աշխատանքից: Նրանց ընտանիքը փոքր բիզնեսով էր զբաղվում Հայաստանում, սակայն ստիպված էր դադարեցնել ձեռնարկատիրական գործունեությունը և լքել Հայաստանը:

[12] http://hcav.am/events/02-12-2014/; http://hcav.am/events/15-09-2014-5/ ; http://hcav.am/events/20-08-2014-1/: http://hcav.am/events/15-09-2014-3/
[13] http://hcav.am/events/23-10-2014-2/
[14] http://tbinternet.ohchr.org/Treaties/CCPR/Shared%20Documents/ARM/INT CCPR NGS ARM 16205 E.pdf

Կետ14

Կոմիտեն մտահոգված է ազատազրկման վայրերում խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի վերաբերյալ դեպքերով իսկապես անկախ բողոքների դիտարկման մեխանիզմի բացակայությամբ և նման դեպքերով դատական հետապնդումների փոքրաթիվ քանակով (հոդվ.. 7և 14):

Կոմիտեի հանձնարարական	Գնահատման սանդղակ	Պետության կողմից ձեռնարկված գործողություններ	ՀԿ-ների այլ մեկնաբանություններ
Մասնակից պետությունը պետք է ստեղծի բոլոր ազատազրկման վայրերում խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի վերաբերյալ բողոքների ստացման և դրանց ընթացք տալու անկախ համակարգ:	C	Որևէ առաջընթաց չի արձանագրվել	2014թ. հունվարի զեկույցի ներկայացումից ի վեր նշանակալի փոփոխություններ չեն արձանագրվել. Լրացուցիչ դիտողությունները տե՛ս ստորև:
Մասնակից պետությունը պետք է ապահովի, որպեսզի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ցանկացած դեպքերով իրականացվի դատական կարգով հետապնդում և նշանակվի համաչափ պատիժ:	C	Որևէ առաջընթաց չի արձանագրվել	ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հաղորդած տեղեկությունների համաձայն՝ խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի գործողությունների համար պատասխանատու կամ դրանց մասնակցած համարվող ոստիկանության ստորաբաժանումների ղեկավարները դատական հետապնդման չեն ենթարկվել: Նրանք պարզապես ժամանակավորապես ազատվում են աշխատանքից և նշանակվում նույն կամ ավելի բարձր պաշտոնում ոստիկանության որևէ այլ ստորաբաժանումում: Վերջերս ՀՔԱ Վանաձորը դատարանում ներկայացրել է մի երիտասարդ կնոջ շահերը, ով դաժան վերաբերմունքի է ենթարկվել ոստիկանության քննչական գործողությունների ժամանակ: Չնայած կինը հիմնավոր ցուցմունք է տվել, որևէ ոստիկան մինչ օրս պատասխանատվության չի ենթարկվել: Այս դեպքը լուսաբանվել է անգամ հեռուստատեսությամբ: 2014 թվականին ստացված հաղորդման համաձայն, «Գրիշա Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմի խոշտանգող ճանաչված Աշոտ Կարապետյանը[15] ոչ միայն շարունակում է աշխատել ոստիկանությունում, այլև նշանակվել է Երևանի ոստիկանապետ: Սա հանրությանն ուղղված հստակ ուղերձ է այն մասին, որ իշխանություններն աջակցում են իրենց գործակալներին բռնություն գործադրելու կամ դրա գործադրման դեպքերում անգործություն դրսևորելու հարցում: Բացի այդ, նման գործելակերպը նպաստում է անպատժելիության ընդհանուր մշակույթի ձևավորմանը:

[15] http://www.armenianow.com/society/human rights/45441/armenia new yerevan police chief torture claim

Կետ 21

Կոմիտեն մտահոգված է դատական մարմնի ոչ անկախ վիճակով: Մասնավորապես, կոմիտեն մտահոգված է դատավորների նշանակման կառուցակարգով՝ մեխանիզմով, որի պատճառով նրանք ենթարկվում են քաղաքական ճնշումների, ինչպես նաև անկախ կարգապահական պատասխանատվության մեխանիզմի բացակայությամբ (հոդվ. 14):

Կոմիտեի հանձնարարական	Գնահատման սանդղակ	Պետության կողմից ձեռնարկված գործողություններ	ՀԿ-ների այլ մեկնաբանություններ
Մասնակից պետությունը պետք է լրամշակի իր ներպետական իրավական դրույթները, որպեսզի ապահովի գործադիր և օրենսդիր ճյուղերից դատական համակարգի անկախությունը և դիտարկի ի լրումն դատավորների կոլեգիալ կորպուսի՝ դատավորների նշանակման և առաջխաղացման և կարգապահական պատասխանատվության կանոնակարգերի կիրառման համար պատասխանատու անկախ մարմին ստեղծելու հնարավորությունը:	C	Որևէ առաջընթաց չի արձանագրվել	Այս ոլորտում կառավարությունը որևէ առաջընթաց չի ունեցել: Այս հարցի շուրջ 2015թ. մարտին հրապարակված իր վերջին զեկույցում[16], Եվրոպական խորհրդի Մարդու իրավունքների հարցերով հանձնակատարը «ողջունել է դատական ոլորտի բարեփոխմանն ուղղված իշխանությունների շարունակական ջանքերը՝ շեշտելով, որ ամեն ջանք պետք է գործադրվի եվրոպական չափանիշներին համապատասխան դատական համակարգի անկախության, անկողմնակալության և արդյունավետության աստիճանը մեծացնելու ուղղությամբ»:[17] Դատական համակարգի նկատմամբ հանրության վստահության առումով որևէ ձեռքբերում չի արձանագրվել: Որպես կանոն, արդարացման դատավճիռների թիվը շատ փոքր է՝ 2014թ. առաջին կիսամյակի դրությամբ ընդհանուր առմամբ՝ 26 վճիռ[18], ինչպես նաև չկան դատարանի կողմից բողոքարկված վճիռներ: Դժվար թե այս ամենը կարողանա նպաստել դատական համակարգի հանդեպ հանրության վստահության մակարդակի բարձրացմանը:

[16] https://wcd.coe.int/com.instranet.InstraServlet?command=com.instranet.CmdBlobGet&InstranetImage=2706043&SecMode=1&DocId=2243332&Usage=2

[17] Կետ 30:

[18] http://court.am/?l=lo&id=50